Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի տարեկան հաղորդումը
Հանրային հեռուստառադիոընկերության 2008 թվականի գործունեության վերաբերյալ

Հանրային հեռուստառադիոընկերության 2008 թվականի գործունեության նպատակները

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության գործունեությունը 2008 թվականին նույնպես նպատակաուղղված էր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների և պարտավորությունների իրականացմանը: Ոլորտում վարված քաղաքականության և տարվա ընթացքում ծավալած գործունեության հիմքում դրված էին հետևյալ հիմնական նպատակները.

1. Ապահովել քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, զվարճալի, գիտաճանաչողական, հայոց լեզվի և պատմության, մարզական և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվությունն ազատորեն ստանալու ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքը:
2. Ապահովել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրական 18 ժամ հեռուստահաղորդումների և օրական 50 ժամ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների իրականացումը:
3. Արբանյակային կապուղով ապահովել Հանրային հեռուստաընկերության հաղորդումների հեռարձակումը եվրոպական երկրներում, Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում՝ սփյուռքահայությանն ու միջազգային հանրությանը հնարավորություն ընձեռելով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները:
4. Ռադիոհաճախություններով, արբանյակային հեռարձակմամբ, ինչպես նաև ինտերնետային կապով ապահովել Հանրային ռադիոընկերության հայերեն և օտար լեզուներով հաղորդումների հեռարձակումն արտասահմանում:
5. Տեխնիկական վերազինման միջոցով բարձրացնել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության հաղորդումների հեռարձակման որակը, ընդլայնել հեռարձակման տարածքը:
6. Եվրոպական հեռարձակողների միության, մի շարք եվրոպական, ԱՊՀ և այլ երկրների հեռուստառադիոընկերությունների հետ փոխշահավետ համագործակցության զարգացում և ընդլայնում:

2008 թվականի գործունեության ընթացքում Հանրային հեռուստառադիոընկերությունը առաջնորդվել է վերոնշյալ նպատակներն ապահովող հետևյալ միջոցառումների իրականացմամբ.

- Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից պատրաստվող և հեռարձակվող հաղորդումների բազմազանության ապահովում.
- հանրապետության տարբեր տարածքների, ազգային փոքրամասնությունների, հասարակական տարբեր շերտերի, սոցիալական խմբերի շահերը և քաղաքական ուժերի դիրքորոշումները ներկայացնող հեռուստառադիոհաղորդաշարերի ու հաղորդումների պատրաստում.
- հանրապետության ամբողջ տարածքում և արտասահմանում Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության հաղորդումների սփռման ապահովում.
- հանրությանը անկողմնակալ, հավաստի և օպերատիվ տեղեկատվությամբ ապահովում.
- հեռարձակվող հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների ընդհանուր ծավալում բնակչության լայն խավերին մատչելի հայրենական արտադրության հաղորդումների քանակի ավելացում և ամբողջությամբ հայալեզու եթերի ապահովում.
- հեռուստաընկերության և ռադիոընկերության տեխնիկական բազայի վերազինման միջոցով հանրապետության ամբողջ տարածքում հաղորդումների հեռարձակման որակի բարձրացում.
- տեխնիկական վերազինման միջոցով հեռուստառադիոհաղորդումների արտադրության տեխնիկական ծախսերի կրճատում և աշխատակիցների սոցիալական վիճակի շարունակական բարելավման ապահովում.
- հեռուստատեսության և ռադիոյի կողմից տրամադրվող տեղեկատվության նկատմամբ ունկնդրի վստահության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում.
- բնակչության լայն խավերին հուզող և նրանց կողմից պարզաբանում պահանջող խնդիրների վերաբերյալ հաղորդումների և լրատվության ծավալի ավելացում.
- արբանյակային հեռարձակման տարածքի աստիճանական ընդլայնում՝ զուգահեռաբար կրճատելով այդ ուղղությամբ կատարվող ծախսերը.
- Եվրոպական հեռարձակողների միության անդամ հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների հետ համագործակցության ընդլայնում:

Վերը թվարկված խնդիրների իրագործմանն են ուղվել «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցները և ոլորտի ընկերությունների առևտրային գործունեությունից ստացված եկամուտները:

«Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի միջոցով իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- 01.01.03.02. Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ– 21045.0 հազար դրամ գումարով.
- 08.03.01.01. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում –96223.8 հազար դրամ գումարով.
- 08.03.01.02. Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին –2302187.6 հազար դրամ գումարով.
- 08.03.01.03. Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին – 691772.2 հազար դրամ գումարով.
- 08.03.01.04. Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին – 22961.9 հազար դրամ գումարով.
- 08.03.01.06. Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով պետական աջակցություն «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին – 10000.0 հազար դրամ գումարով:

Թվարկված ծրագրերով նախատեսված աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն», «Շիրակի հանրային հեռուստառադիո» և «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով:

Նշված ծրագրերի շրջանակներում փաստացի կատարված աշխատանքների ծավալները և դրանց դիմաց պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

(հազար դրամ)

Ծրագրի անվանումը	Բյուջետային դասակարգման				Հաստատ-ված բյուջե	Փոփոխութ-յուններ բյուջեում (+ -)	Բյուջեն փոփոխութ-յուններից հետո	Ֆինանսավո-րում	Փաստացի ծախսեր
	Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր					
Միջազգային կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ	01	01	03	02	21045.0		21045.0	19864.0	19652.1
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	08	03	01	01	96223.8		96223.8	87443.5	87497.9
Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին	08	03	01	02	2302187.6		2302187.6	2302187.6	2302187.6
Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին	08	03	01	03	691772.2		691772.2	691772.2	691772.2
Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին	08	03	01	04	22961.9		22961.9	22961.9	22961.9
Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով պետական աջակցություն «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին	08	03	01	06	10000.0		10000.0	10000.0	10000.0
Ընդամենը					3144190.5		3144190.5	3134229.2	3134071.9

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և նրա աշխատակազմի պահպանումն իրականացվել է «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով նախատեսված միջոցների հաշվին: 2008թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված 96223.8 հազ. դրամ գումարից ծախսվել է 87443.5 հազ. դրամ հետևյալ ծախսային հոդվածներով.

Ծախսային հոդվածի անվանումը	Գումարը (հազ. դրամ)
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	62240.2
Վճարներ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին	7509.2
Կապի ծառայություններ	1405.6
Գույքի և սարքավորումների վարձակալություն	3588.0
Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4838.8
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	24.0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	495.9
Գրասենյակային նյութեր և հագուստ	461.9
Տրանսպորտային նյութեր	3062.0
Պարտադիր վճարներ	7.5
Վարչական սարքավորումներ	3810.4
ԸՆԴԱՄԵՆԸ	87443.5

Հատկացված միջոցների խնայողաբար օգտագործման արդյունքում 8780.3 հազ, դրամ տնտեսվել է:

Ինչպես և նախորդ տարիներին, 2008 թվականին նույնպես Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն իր աշխատակազմի միջոցով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով իրեն ամրագրված լիազորությունների շրջանակներում շարունակել է համակարգել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և ոլորտի մյուս ընկերությունների գործունեությունը: Մասնավորապես, խորհրդի կողմից հաստատվել են ընկերությունների 2008 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվները, ծրագրերի կառուցվածքը, դրանց առանձին բաժինների համամասնությունները, թեմատիկ ուղղությունները և հեռարձակման տեխնիկական միջոցների ցանկերը: Միջոցներ են ձեռնարկվել Հանրային հեռուստաընկերությանը և Հանրային ռադիոընկերությանը օրենքով ամրագրված պարտականությունների կատարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Այդ նպատակով փոփոխություններ են կատարվել ծրագրային քաղաքականության մեջ, մասնավորապես, կրճատվել և այնուհետև դադարեցվել է լատինամերիկյան սերիալների հեռարձակումը, օրվա լավագույն եթերաժամերին

ավելացել են սոցիալ-տնտեսական և քաղաքական հաղորդումների ծավալները, ինչպես նաև «Նոր ալիք» հեռուստաալիքի բազայի վրա ստեղծվել է օրական 24 ժամյա եթերով «Արարատ» մշակութային հեռուստաալիքը:

Մեծ աշխատանքներ են տարվել ոլորտի միջազգային կառույցների և արտասահմանյան հեռուստաընկերությունների հետ կապերի և փոխհարաբերությունների ընդլայնման նպատակով: Միջոցներ է ձեռնարկվել միջազգային մրցույթներին ակտիվ և արդյունավետ մասնակցության ուղղությամբ:

Մշակվել և ՀՀ կառավարություն են ներկայացվել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2009-2011 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերը և ոլորտի քաղաքականությունը:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2008 թվականին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը և պատրաստել է օրական 24 ժամ հաղորդումներ «Հ1» առաջին ալիքի, 24 ժամ «Նոր ալիք» հեռուստաալիքի և 24 ժամ արբանյակային ծրագրի համար:

Հանրային հեռուստաընկերությունը պատրաստում և հեռարձակում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված թեմատիկ ուղղություններով հեռուստահաղորդումներ՝ փորձելով առավելագույնս բավարարել հանրության բոլոր շերտերի պահանջմունքները: Սակայն մեկ հեռուստաալիքի շրջանակներում հնարավոր չէ ամբողջությամբ անդրադառնալ և բավարար եթերաժամանակ հատկացնել բոլոր ոլորտների, այդ թվում՝ մշակութային կյանքի տարբեր կողմերի համաչափ լուսաբանմանը և ամբողջապես բավարարել հանրության բոլոր շերտերի հոգևոր և մշակութային պահանջմունքները: Խնդրի առաջնահերթությունից ելնելով՝ երկրի ղեկավարության, հասարակական կառույցների, գիտության և մշակույթի գործիչների հետ քննարկումների արդյունքում որոշվեց և 2008 թվականի սեպտեմբերին «Նոր ալիք» հեռուստաալիքի բազայի վրա ստեղծվեց օրական 24 ժամյա եթերով «Արարատ» մշակութային հեռուստաալիքը, որի նպատակն է մշակութային ժառանգության և արդի մշակութային կյանքի համակողմանի լուսաբանումը՝ արտահայտելով հասարակության տարբեր խմբերի մշակութային հետաքրքրություններն ու ակնկալիքները: Բացի այդ հեռուստաալիքը, աստիճանաբար ընդլայնելով իր հեռարձակման տիրույթը, հնարավորություն կընձեռի համախմբելու Հայաստանի և սփյուռքի հոգևոր ներուժը: Այս հեռուստաալիքի մի շարք հաղորդումներ ներկայացվում են նաև արբանյակային հեռարձակմամբ:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «2008 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին» ծրագրով Հանրային հեռուստաընկերության համար նախատեսվել է 2023794.9 հազ. դրամ դրամաշնորհ: 2008թ. կատարվել է հոդվածային վերաբաշխում, և գործառական դասակարգման 08.03.01.02. «Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին ծրագրի «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածից 200300.0 հազ. դրամ տեղափոխվել է «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդված: Ընդհանուր առմամբ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով 2008թ. ընկերությանը հատկացվել է 2224094.9 հազ. դրամ, որից հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման իրավունքների ձեռքբերման համար հատկացվել է 1528856.5 հազ. դրամ, հեռարձակման համար՝ 695238.4 հազ. դրամ, իսկ «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով տեխնիկական վերազինման համար հատկացվել է 78092.7 հազ. դրամ:

Հեռուստահաղորդումների պատրաստում

2008թ. պահպանելով իր առաջնային դիրքը հայաստանյան հեռուստաեթերում՝ Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության գործունեությունը: Հաղորդումների պատրաստման ընթացքում ընկերությունն առաջնորդվել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից ընդունված նպատակային ծրագրերով: Տարվա ընթացքում «Հ1» առաջին ալիքի համար պատրաստվել է խորհրդի կողմից սահմանված թեմատիկ ուղղություններով 8725.1 ժամ հաղորդումներ:

N	Հաղորդման թեմատիկ ուղղվածությունը	Հաղորդման պատրաստման ծավալը հաշվետու ժամանակաշրջանում (ժամ)
1	Լրատվական-վերլուծական	797.2
2	Սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական	740.5
3	Զվարճալի	375.1
4	Փաստագրական	556.8
6	Մշակութային	4267.4

7	Մանկապատանեկան, երիտասարդական	289.3
8	Կրթական	73.0
9	Մարզական	390.8
10	Երաժշտական	854.4
11	Հոլովակներ, այլ հաղորդումներ	380.6
	Ընդամենը	8725.1

2008 թվականին Հանրային հեռուստաընկերությունը, եթերում պահպանելով մեծ հեռուստալսարան ունեցող հաղորդումներն ու հաղորդաշարերը՝ պատրաստել և եթեր է հեռարձակել մի շարք նոր հաղորդումներ ու հաղորդաշարեր:

Հայաստանում միջազգային ստանդարտներին համապատասխան հեռուստալսարանի հետազոտություններ է անցկացնում «TV MR AM» ընկերությունը, որի կողմից տրամադրվող ցուցանիշները ամփոփ ներկայացվել են ստորև ներկայացված գրաֆիկների միջոցով:





Համաձայն այդ ցուցանիշների մեր Հանրապետությունում Հանրային հեռուստաընկերության հեռուստադիտողների մասնաբաժինը ընդհանուր հեռուստադիտողների լսարանում 2007 թվականին կազմել է 27.57%, իսկ 2008 թվականին՝ 21.03%: Չնայած այդ ցուցանիշը 2007 թվականի համեմատ կրճատվել է մոտ 6.5%-ով, այնուամենայնիվ Հանրային հեռուստաընկերությունը 2008 թվականին ևս շարունակել է պահպանել իր առաջատար դիրքերը հայկական հեռուստաշուկայում: Եվ եթե համեմատենք այս ցուցանիշը մեր հարևան ու եվրոպական շատ երկրների ոչ միայն Հանրային, այլև մասնավոր հեռուստաընկերությունների համանման ցուցանիշների հետ, ապա կտեսնենք, որ այն բավականին բարձր ցուցանիշ է:

2008 թվականին վերոնշյալ ցուցանիշի նվազման հանգամանքը հիմնականում պայմանավորված է նրանով, որ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի քաղաքականությամբ պայմանավորված՝ 2008 թվականի ընթացքում նվազել և այնուհետև դադարեցվել է լատինաամերիկյան սերիալների, մի շարք շոու ծրագրերի և այլ հաղորդումների հեռարձակումը, որոնք ունեին բավականին մեծ հեռուստալսարան: Դրանց փոխարեն եթերում ավելացել է հասարակական-քաղաքական և մշակութային հաղորդումների, ինչպես նաև հայրենական արտադրության ֆիլմերի հեռարձակման ծավալները:

«Եվրոդատա» միջազգային կազմակերպությունը յուրաքանչյուր տարի հրապարակում է ավելի քան 73 երկրների հեռուստաեթերների լավագույն (մեծ հեռուստալսարան ապահոված) 15 հաղորդումները: 2008 թվականին նշված ընկերության պատվերով «TV MR AM» ընկերությունը հրապարակել է Հայաստանի հեռուստաեթերի ամենամեծ հեռուստալսարան ունեցող 15 հաղորդումները: Այդ հաղորդումներից 11-ը

Հանրային հեռուստաընկերության հաղորդումներ են՝ «Եվրատեսիլ 2008», «Հայլուր» լրատվական ծրագրի հիմնական թողարկում, «Վայրի կատու» սերիալ, «Ազգային երաժշտական մրցանակաբաշխություն 2007», «Ստրկուհի Իզաուրա» սերիալ, «Երկու աստղ» հեռուստանախագիծ, «Համերգ՝ նվիրված հայկական բանակի 16-ամյակին», «Ծիծաղամարտ», «Տաշիր 2008. ազգային երրորդ մրցանակաբաշխություն», «ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի պատասխանները քաղաքացիների հարցերին» և «Կենաց ուղի»:

Հանրային հեռուստաընկերությունը, 2008 թվականին իր եթերում պահպանելով բարձր վարկանիշ ունեցող հաղորդումները, եթերը համալրել է մի շարք նոր հաղորդաշարերով, որոնցից շատերը նույնպես տարվա ընթացքում ունեցել են բարձր վարկանիշ և նպաստել են եթերի բազմազանության ապահովմանը:

Հանրայինի լրատվական հաղորդումների շարքում շարունակել է իր ուրույն տեղը պահպանել «Հայլուր» լրատվական ծրագիրը, որն օրվա ընթացքում եթեր է հեռարձակվել 9.00, 13.00, 15.00, 17.00, 21.00 /հիմնական թողարկում/ ժամերին և կեսգիշերին, իսկ անհրաժեշտության դեպքում եթեր են հեռարձակվել նաև «Հայլուր»-ի լրացուցիչ թողարկումներ: «Հայլուրը» հայկական հեռուստաեթերում շարունակել է մնալ ամենամեծ հեռուստալսարան ունեցող լրատվական ծրագիրը՝ 26.52% մասնաբաժնով:



«Հայլուրը» մշտապես տեխնիկական վերազինման գործընթացի մեջ է: Լրագրողական կազմը պարբերաբար համալրվում է թարմ հայացք ունեցող բարձրակարգ կադրերով: «Հայլուրի» կենտրոնակայանը Երեւանում է՝ Հանրային

հեռուստաընկերության համալիրում, իսկ մայրաքաղաքից դուրս թղթակցային կետեր են գործում ՀՀ մարզերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, թղթակցություններ են ստացվում նաև Ջավախքից, Ռուսաստանից, Եվրոպայից, Միացյալ Նահանգներից: 2008 թվականից մշտական գործող թղթակցային կետեր են գործում ԱՄՆ-ում (Լոս-Անջելես և Վաշինգտոն քաղաքներում) և Ֆրանսիայում (Փարիզ):

«Հայլուր»-ը պատրաստել է նաև «360^0» և «Հայլուր կիրակի» թողարկումները, որոնք հեռուստադիտողին են ներկայացրել մեր հանրապետությունում և արտասահմանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, հասարակական-քաղաքական անցուդարձը, երկրի սոցիալական վիճակն ու մշակութային նորությունները՝ համապատասխան վերլուծություններով: «Հայլուր կիրակի» լրատվական-վերլուծական ծրագիրը յուրաքանչյուր կիրակի, 45 րոպեների ընթացքում բազմակողմ և ընդգծված ներկայացնում է շաբաթվա կարևորագույն իրողությունները: Բացառիկ ռեպորտաժները լուսաբանում են լրատվության մութ մնացած, հաճախ ամենասուր անկյունները: «Հայլուր կիրակի»-ի պատմությունների թեմաներն են և' այն հիմնական իրադարձությունները, որոնք ամբողջ շաբաթ եղել են Հայաստանի ու աշխարհի ուշադրության կենտրոնում, և' այն երևույթները, որոնք այդ օրերին գուցե և բավականաչափ ցցուն չեն եղել, բայց իրենց տարածվածությամբ կամ անլուծելիությամբ հանրության համար հիմնախնդիր են:

Տնտեսական, հասարակական-քաղաքական հաղորդումների շարքը համալրվել է տարբեր թոք-շոուներով: Շաբաթը երկու օր եթեր է հեռարձակվել լայն հեռուստալսարան նվաճած «5-րդ անիվ» հաղորդաշարը, որին պարբերաբար մասնակցել և հանրությանը հուզող հարցեր են քննարկել հասարակության բոլոր շերտերի ներկայացուցիչներ՝ քաղաքական-հասարակական, պետական, օրենսդիր, գործարար ոլորտների ներկայացուցիչներ, հայտնի մտավորականներ ու գիտնականներ: Շաբաթական մեկ հաղորդումով հանրությանն է ներկայացել «Եվրապոլիս» թոք-շոուն, որտեղ հյուրընկալվել են մեր երկրի, ինչպես նաև արտասահմանցի պետական և հասարակական գործիչներ և քաղաքական ուժերի ներակայացուցիչներ ու արտահայտել իրենց տեսակետները մեր երկրի և միջազգային կարևոր խնդիրների վերաբերյալ:

2008 թվականի սեպտեմբերից եթերում է Հանրային հեռուստաընկերության «25 րոպե» հաղորդաշարը, որի հեղինակը ուղիղ եթերում հանրությանը հուզող հրատապ թեմաների շուրջ 25 րոպե զրույց է ունենում քաղաքական, հասարակական, մշակութային որևէ գործչի կամ պաշտոնիայի հետ: «Կարծիք» հաղորդաշարը հանրությանը ներկայացնում է հանրապետության բոլոր բնակավայրերում՝ սահմանային գյուղերում, Արցախում, ինչպես նաև Վրաստանի հայկական բնակավայրերում տիրող իրական իրավիճակն ու պատկերը: Հաղորդաշարի օբյեկտը փոքր համայնքներն են՝ պատմական ու մշակութային անցյալով, այսօրվա տնտեսական, սոցիալական, կրթամշակութային

հիմնախնդիրներով: Պարբերաբար «Կարծիք» հաղորդաշարի ուշադրության կենտրոնում են հայտնվում տվյալ ժամանակահատվածում հասարակության այս կամ այն շերտին մտահոգող հիմնախնդիրները: 25 րոպե տևողությամբ հաղորդման ընթացքում, չմիջամտելով գործողությունների բնական զարգացմանը, զրույցների, տեսակետների ու կարծիքների միջոցով ներկայացվում է բնակավայրը, հասարակական հնչեղություն ունեցող հիմնախնդիրները: «Մերոնք» հեռուստանախագիծը պատմում է տարբեր երկրներում ապրող մեր հայրենակիցների մասին: Հաղորդաշարի հյուրերն են եղել ֆրանսիացի ճանաչված ռեժիսոր Ռոբեր Գեդիկյանը, աշխարհահռչակ հայազգի նկարիչ Ժանսեմը, ամերիկահայ ռեժիսոր Կարլա Կարապետյանը, քանդակագործ Դավիթ Երևանցին և այլոք: «Մերոնք» ծրագիրը ծանոթացնում է հայ հեռուստադիտողին սփյուռքում ապրող մեր հայրենակիցների հետ, որոնք պատմում են իրենց կյանքի, գործունեության և այն երկրի մասին, որտեղ նրանք ապրում են:

Հանրային հեռուստաընկերության եթերում շարունակվել է հեռարձակվել «Ձեռագիր» հաղորդաշարը, որում անհրաժեշտ տեղեկատվություն էր ներկայացվում ՀՀ կառավարության գործունեության, իրականցվող և իրականացվելիք ծրագրերի վերաբերյալ: «Ձեռագիր» հաղորդաշարի նպատակն է ամեն շաբաթ Հանրային հեռուստաընկերության եթերում հասարակությանը ներկայացնել ՀՀ կառավարության գործունեությունը՝ հնարավորինս ամբողջական, սպառիչ և հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ հաղորդելով անցած շաբաթվա ընթացքում կառավարությունում ընդունված կարևորագույն որոշումների, քննարկումների մասին, միաժամանակ ներկայացնելով գործադիր իշխանության տնտեսական քաղաքականությունը, տարբեր ոլորտներում դրա իրականացման ընթացքն ու արդյունքները:

«Զինուժ» և «Մարտիկ» հայրենասիրական բնույթի հաղորդաշարերը հանրությանն են ներկայացրել հայկական բանակի առօրյան: ՀՀ ՊՆ տեղեկատվության վարչության «Զինուժ» ծրագիրը ներկայացնում է բանակի շաբաթվա առօրյան՝ միջազգային ռազմաքաղաքական շփումներ, մարտական հերթապահություն, զորամասային կյանք, զորավարժություններ, զինվորական ճակատագրեր, զինվոր-հրամանատար հարաբերություններ, պատմական-մշակութային նյութեր, ինչպես նաև անդրադարձ բանակի անցած հերոսական ուղուն: Բանակային կյանքի բազմաբովանդակ լուսաբանմամբ հագեցած է նաև «Զինուժի» կիրակնօրյա թողարկումը:

Ազգային Ժողովի գործունեությունը Հանրայինի եթերում լուսաբանվել է «Հայլուր խորհրդարան» և «Խորհրդարանական շաբաթ» հաղորդաշարերի միջոցով: Այս հաղորդաշարերի ընթացքում ներկայացվում է պատգամավորների, խումբ-խմբակցությունների Ազգային ժողովի քառօրյա նիստերի ընթացքում քննարկման

ներկայացված հիմնահարցերը, բնակչությանը հուզող սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, ինչպես նաև արտաքին քաղաքականությանը վերաբերող թեմաներով պատգամավորների՝ ՀՀ կառավարությանն ուղղված հարցերն ու դրանց պատասխանները:

2008 թվականի ընթացքում նախագահական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Հանրայինը վճարովի և անվճար եթերաժամանակ է տրամադրել նախագահական ընտրություններում գրանցված թեկնածուներին, ընդ որում տրամադրվել է մոտ 528 րոպե անվճար և 639 րոպե վճարովի եթերաժամանակ:

2008 թվականին շարունակվել է հեռարձակվել «Առաջին ծրագիր»-ը, որի բազմաբնույթ էջերն անդրադառնում են մեր կյանքի ամենատարբեր ոլորտներին: Հաղորդաշարն անդրադառնում է հանրապետությունում տեղի ունեցող մշակութային, մարզական իրադարձություններին, ինչպես նաև տնտեսության, գիտության, կրթության և այլ բնագավառներում արձանագրվող փաստերին ու նորություններին: Անդրադարձերն իրականացվում են ծրագրի տաղավարում տվյալ ոլորտին ու երևույթին առնչվող մարդկանց հյուրընկալելու միջոցով: Հաղորդաշարը ներառում է նաև «Եվ դարից երկար ձգվում է օրը» էջը, որում անդրադարձներ են լինում անվանի հայերին, նրանց ծննդյան օրերին:

Շարունակվել է հեռարձակվել «Կարոտ» հաղորդաշարը: Ծրագիրը ներկայացնում է հայ մարդուն, հայի տեսակն ու ապրելակերպը, ապրում նրա հոգսով, ուրախանում նրա հաջողություններով: Շրջելով գյուղերում՝ շարքը ոչ միայն բարձրաձայնում է բնակիչների խնդիրները, նաև յուրաքանչյուր բնակավայրում բնակիչների ջանքերով վեր հանում, վերապրում ու հեռուստադիտողին է ներկայացնում այն ավանդույթներն ու սովորույթները, որոնց ակունքը հայկականն է: Յուրաքանչյուր հաղորդում ներկայացնում է տվյալ բնակավայրի պատմությունը՝ սկսած հնագույն շրջանից, ներկայացվում են պատմա-ճարտարապետական ուշագրավ հուշարձանները, նաև բնակավայրի գեղատեսիլ այն հատվածները, որոնց հետ ժողովրդական-ազգագրական ավանդույթներ, սովորույթներ են առնչվում: Հայրենասիրություն, ավանդապաշտություն, ազգային-հոգևոր արժեքների պահպանություն. ահա դրանք են ծրագրի հիմնական խնդիրները:

Հանրային հեռուստաընկերության եթերում շարունակել են հեռարձակվել զվարճալի «Ծիծաղի տուն», «Ծիծաղամարտ», «Երկու աստղ» և այլ հաղորդաշարերը: Արամայիս Սահակյանի «Ծիծաղի տանը» իրենց կյանքից և աշխատանքից զվարճալի ու հետաքրքիր դրվագներ են հիշում տարբեր որոլորտների մարդիկ: Հաղորդաշարը հրավիրում է անվանի մտավորականների, որոնք պատմում են իրենց և մյուս անվանի մարդկանց հետ կապված սրամիտ և իրական պատմություններ: Հաղորդաշարը նպատակ ունի ուրախություն և լավատեսություն պարգևել հեռուստադիտողներին՝ միաժամանակ սերունդների համար

պահպանելով հայ նշանավոր մարդկանց հետ կատարված պատմությունները: Հաղորդման ընթացքում հնչում են նաև երաժշտական ուրախ կատարումներ, դերասանական նմանակումներ, ինչպես նաև ժողովրդական կատակներ: 2008 թվականին Հանրային հեռուստաընկերությունը շարունակեց աշխարհում հայտնի «Երկու աստղ» շվեդական հեռուստանախագծի ցուցադրությունը: Երաժշտական-ժամանցային այս ծրագիրն արդեն իր ուրույն տեղն է գրավել հայկական հեռուստաեթերում և 2008 թվականին նունպես լավագույն 15 հաղորդումների մեջ էր: Շոուի մասնակից զույգերը կազմվում են մեկ ճանաչված երգչից կամ երգչուհուց և կրկին ճանաչված, բայց այլ ոլորտի (սպորտ, քաղաքականություն, թատրոն և այլն) ներկայացուցչից, որոնք ներկայացնում են հանրության կողմից սիրված, հանրահայտ ստեղծագործություններ:

Սփյուռքում ապրող մեր հայրենակիցների մասին է պատմել «Օտար, ամայի ճամփեքի վրա» հաղորդաշարը: Ծրագիրը պատմում է տարբեր երկրների ու քաղաքների մասին, որտեղ ապրում են մեր հայրենակիցները, չմոռանալով նաև տվյալ երկրների տեսարժան վայրերն ու մշակութային արժեքները: Եզակի նկարահանումներ են կատարվել տարբեր երկրների թանգարաններում, տաճարներում, պալատներում և համալիրներում: Հաղորդումն արդեն պատմել է 49 երկրների և ավելի քան 230 քաղաքների մասին: Հաղորդումը բավականին մեծ հեռուստալսարան է նվաճել, ինչի մասին են վկայում նաև բազմաթիվ նամակներն ու զանգերը՝ հասցեագրված այս հաղորդաշարին: «Հայաստանի ճամփեքով» հաղորդաշարի ստեղծագործական խումբը, շրջելով Հայաստանի ողջ տարածքով, պատմում է քաղաքների, գյուղերի պատմաճարտարապետական հուշարձանների, ինչպես նաև մարդկային ինքնատիպ ճակատագրերի մասին: Հաղորդումը հետապնդում է ճանաչողական նպատակներ՝ Հայաստանը հնարավորինս մանրամասն հեռուստադիտողին ներկայացնելու համար: «Ծագումով հայերը» հաղորդաշարը շարունակում է իր ճանապարհորդությունը աշխարհով մեկ՝ ներկայացնելով գիտական նվաճումներ, ճարտարապետական գլուխգործոցներ, քաղաքական հզոր անհատականություններ, կինոարվեստի ստեղծագործություններ, գեղարվեստական մնայուն արժեքներ: Դրանց հեղինակները հայեր են՝ աշխարհով մեկ սփռված հայերի զավակներ, որոնց մասին քչերը գիտեն կամ բնավ չգիտեն: Հաղորդաշարը հայտնաբերում և հայ հեռուստադիտողին է ծանոթացնում արտասահմանում ապրող և ստեղծագործող այն հայ գործիչներին, ովքեր մեծ ներդրում ունեն համաշխարհային մշակույթի և գիտության ասպարեզում, սակայն ճանաչված չեն հայրենիքում:

«Հատուկ գոտի» հաղորդաշարն անդրադարձել է ֆիզիկական, մտավոր դժվարություններ ունեցող առանձին խմբերի խնդիրներին, նրանց կյանքին: Հեռարձակվել է նաև «Կանանց աշխարհը. աշխարհի կանայք» հաղորդաշարը, որն անդրադառնում է ամբողջ աշխարհի

կանանց՝ սկսած ապրելակերպից մինչև ճաշատեսակներ, տարազից մինչև նորաձևություն: Նախագիծն ունի զվարճալի, նաև ուսուցողական բնույթ, նպատակն է ցույց տալ գեղեցիկ ու հետաքրքիր ապրելակերպի արվեստը, խթանել երկրում տուրիզմի զարգացումը, ամրապնդել բարեկամությունն ու փոխըմբռնումը տարբեր ժողովուրդների միջև: Հեռուստահաղորդումը նկարահանվում է տարբեր երկրներում, և հիմնական թեման կանայք են ու նրանց աշխարհը:

2008 թվականին սկսել է հեռարձակվել «Ինչու է աղմկում անցյալը» ծրագիրը, որը հայոց նորագույն պատմության էկրանավորված տարբերակն է: Այն անդրադառնում է պատմության ոչ միայն հայտնի դեպքերին ու իրադարձություններին, այլ փորձում է բացահայտել քողարկված էջերն ու ներկայացնել հանրությանը: Քաղաքական իրադարձություններին զուգահեռ անդրադարձ է կատարվում թե տնտեսական, մշակութային կյանքին և թե տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների ազդեցությունն իրենց վրա կրողներին՝ հասարակ ժողովրդի առօրյային ու ճակատագրին: Ներկայացվում է Սփյուռքը, Հայոց եկեղեցին՝ հիշարժան և կարևոր մանրամասներով: Ծրագրի մեկնարկային կետը 1918 թվականն է՝ Հայաստանի Առաջին Հանրարետության ձևավորման շրջանը: Հաղորդաշարը ներկայացնում է հայ իրականության պատմությունը խորհրդային շրջանում:

Հանրային հեռուստաընկերության եթերում միշտ էլ մեծ տեղ են գրավել մշակույթին, մասնավորապես, հայկական մշակույթին նվիրված հաղորդումները: Դրանք բազմաբնույթ են իրենց ընդգրկումներով և ի զորու են բավարարելու հասարակության ամենատարբեր շերտերի հետաքրքրասիրությունները: Հեռուստադիտողը հեռուստաէկրանի միջոցով հնարավորություն է ունենում շփվելու արվեստին, գրքին և գրչին նվիրված մարդկանց, մտավորականների հետ, լսելու մշակութային նորություններ, իմանալու այս ոլորտի նոր ձեռքբերումների մասին, առնչվելու դասականին: «Ծննդավայր» շարքը հեռուստադիտողին է ներկայացրել հայտնի սփյուռքահայ նշանավոր գրողների, բանաստեղծների, մշակութային գործիչների, գեղանկարիչների, մանկավարժների, արվեստի մարդկանց կյանքը և գործունեությունը: Հաղորդաշարն արդեն վեց տարի է եթերում է: Այն նվիրված է հայ մշակույթի անվանի մտավորականներին և անդրադառնում է հատկապես արեւմտահայ ու սփյուռքահայ մշակույթի մեծերին: Երբեմն հաղորդման նյութ կարող են ծառայել Սփյուռք-Հայաստան կարևորագույն իրադարձությունները, ինչպես օրինակ՝ Հայ և օտարագիր գրողների համաժողովները: Հաճախ անդրադարձ է լինում հոգևոր և մշակութային կենտրոններին, ինչպես պատմական անցյալի /Սուրբ Ղազար, Երուսաղեմ, Պոլիս, Անի, Երզնկա/, այնպես էլ նորօրյա գաղթօջախներին և նրանց մշակութային կյանքին: «Տարելից» հաղորդաշարը շարունակել է պատրաստել հաղորդումներ՝ նվիրված մշակույթի մարդկանց և մշակութային իրադարձություններին,

նշանավոր տարեթվերին: «Ազգային հայացք»-ը հիմնականում ուղղված է մտավորականությանը: Հաղորդաշարի հեղինակ ՀՀԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյանի մոտ զրույցի են հրավիրվել արվեստագետներ, գիտության մարդիկ, քաղաքագետներ և հոգևորականներ: Առաջադրվել են հարցեր, որոնք այսօր դուրս են ուշադրությունից՝ ինչպես ենք պատկերացնում ազգայինը համամարդկայինի համատեքստում, ինչ արժեքային համակարգ ենք ժառանգել, հնանում են ազգի բարոյական չափանիշները և եթե՝ այո, ապա՝ որն է նորը: Հեռարձակվել է նաև «Կերպարվեստ» հաղորդաշարը, որը ներկայացնում է հայ կերպարվեստի ներկայացուցիչներին, նկարչի, քանդակագործի ստեղծագործական ավանդը, ստեղծագործությունները և նրա դերն ու տեղը մեր կերպարվեստի պատմության մեջ:

2008 թվականին շարունակվել են կրկնօրինակման աշխատանքները: Կրկնօրինակվել են բազմաթիվ գեղարվեստական, փաստագրական, ճանաչողական ու գիտահանրամատչելի կինոնկարներ, հեռուստասերիալներ, մուլտիպլիկացիոն ֆիլմեր, որոնք հեռարձակվել են բացառապես հայերեն: Բացի այդ «Ութ ու կես» հաղորդաշարը հայ բարձրաճաշակ կինոդիտողներին է ներկայացրել բազմաթիվ բարձրարվեստ ֆիլմեր: Հաղորդաշարը ներկայացնում է մեծ էկրանի համաշխարհային պատմության լավագույն ֆիլմերը, անդրադառնում մեր ժամանակների տարբեր կինոփառատոների անվանակարգերում ներկայացված և մրցանակների արժանացած նորագույն գործերին, ծանոթացնում համաշխարհային հայտնի դերասանների, ռեժիսորների, կինոքննադատների կարծիքներին:

Կրթական, մանկապատանեկան և երիտասարդական հաղորդումները բազմաբնույթ են և կշարունակեն մեծ տեղ զբաղեցնել մեր եթերում: Դրանց ցանկը համալրվել է հեռուստամրցույթներով, ինտելեկտուալ խաղերով, երաժշտական հաղորդումներով, շոուներով: Երիտասարդական հաղորդումները կրել են թեթև, ժամանցային բնույթ, բայց նաև քննարկել են երիտասարդությանը հուզող կարևոր խնդիրներ ու հիմնահարցեր: Մեր եթերում շարունակվել է մանկական հեռուստախաղ «Բոնուսը», որը հաջող փորձ է երեխաների և պատանիների մեջ խթանելու սերը գիտելիքի, ուսման, արվեստի հանդեպ: 2008 թվականից սկսեց եթեր հեռարձակվել «Հայ ասպետ» հաղորդաշարը, որն իր մեծ նպաստն է բերում ազգային մշակույթի, ինքնության և պատմության նկատմամբ մատաղ սերնդի հետաքրքրության բարձրացմանը: Հաղորդաշարին մասնակցում են հանրապետության բոլոր մարզերի և բնակավայրերի դպրոցականները, ինչը յուրատեսակ խթան է ուսման մակարդակի բարձրացմանը: «Արևիկ» մանկապատանեկան համույթն ամեն շաբաթ իրենց հասակակիցներին է ներկայացնում նորանոր ստեղծագործություններ, յուրովի պրոպագանդում մանկական երգը: Մանկական հաղորդաշարերից հեռարձակվել է նաև «Ժուկով ժամանակով», «Հեքիաթն է կանչում»

(«Արարատ» հեռուստաալիքով) հեքիաթների շարքը, որոնք մեծ դեր ունեն աճող սերնդին ազնվություն, ընկերասիրություն, բարոյականություն, ինքնուրույն մտածելու, որոշումներ կայացնելու և բազմաթիվ այլ դրական հատկանիշներ զարգացնելու մեջ: «Ժուկով-ժամանակով» հեքիաթների շարքը եթեր է հեռարձակվել սուրդոթարգմանությամբ՝ ապահովելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջը և ավելի մատչելի դարձնելով այդ հաղորդաշարը խուլուհամր երեխաների համար:

Շարունակվել է եթեր հեռարձակվել հեռուստադիտողների ուշադրությանն արժանացած «Իմ իրավունքը» շարքը. ինչպես և որտեղ կարող են քաղաքացիները իրազեկվել իրենց իրավունքներին ու պարտականություններին, որոնք են օրենքի պահանջները, ինչպես վերականգնել խախտված իրավունքը, ինչպես հետամուտ լինել իրավունքների պաշտպանությանը կամ ինչպես ներկայացնել դրանք... Հեռուստադատարանում ընթանում է մրցակցային դատավարություն, և հայցվորն իր շահերն ու խախտված իրավունքների վերականգման պահանջներն է ներկայացնում պատասխանողին:

Երկրի մարզական կյանքը և միջազգային մարզական միջոցառումները լուսաբանելու նպատակով եթեր են հեռարձակվել մարզական մի շարք հաղորդումներ: Ձեռք են բերվել իրավունքներ և Հայաստանում հեռարձակվել են Եվրոպայի ֆուտբոլի առաջնության բոլոր հանդիպումները, ՀՀ հավաքականի աշխարհի առաջնության ընտրական խաղերը և Եվրոպայի Չեմպիոնների լիգայի խաղերը: Հարկ է նշել, որ Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը տարվա ամենամեծ լսարան ունեցող մարզական հեռուստահաղորդումն էր, որի հեռուստալսարանի մասնաբաժինը կազմել է 73.89%: 2008 թվականին հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել է նաև Պեկինում կայացած ամառային օլիմպիական խաղերը՝ հայ հեռուստադիտողին հնարավորություն ընձեռելով դիտել հայ և աշխարհի լավագույն մարզիկների փայլուն մրցելույթները: 2008 թվականի ընթացքում հեռարձակված 20 լավագույն սպորտային հանդիպումներից 17-ը ցուցադրվել է Հանրային հեռուստաընկերությամբ: Շաբաթը մեկ անգամ հեռարձակվել են «Ֆուտբոլ Առաջինով» և «TV հանդես. Չեմպիոնների լիգա» մարզական հաղորդաշարերը: «Ֆուտբոլ Առաջինով» հաղորդաշարի ուշադրության կենտրոնում Հայաստանի ազգային հավաքականն է՝ ընտրական և ընկերական հանդիպումներով: Համակողմանիորեն լուսաբանվել են տարբեր տարիքի հավաքականների ելույթները, մեր ակումբների մասնակցությունը Եվրագավաթներին, Հայաստանի “Սթար” ազգային առաջնությունը, Հայաստանի գավաթի խաղարկությունը: Հաղորդաշարը պարբերաբար անդրադարձել է Եվրոպայի հրաշալի հնգյակի/ Իսպանիա, Անգլիա, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա/ ազգային առաջնություններին, Իսպանիայի և Անգլիայի գավաթի խաղարկություններին: Իսկ շախմատասերների համար շարունակվել է

եթեր հեռարձակվել «Շախմատ-64» վերլուծական հաղորդաշարը: Շախմատը Հայաստանում հենակետային մարզաձև է: Վերջին տարիներին ամենաիմաստուն խաղի մեր վարպետները հասել են փառահեղ նվաճումների: «Շախմատ 64» հաղորդաշարը համակողմանիորեն լուսաբանել է բոլոր շախմատային միջոցառումները՝ մանրամասն տեղեկություններ հաղորդելով այդ մրցաշարերում մեր մարզիկների մասնակցության մասին: «Շախմատ 64» հաղորդաշարը եթերում է յուրաքանչյուր կիրակի:

2008 թվականին Հանրային հեռուստաընկերության եթերում ցուցադրվել են հանդիսատեսի կողմից մեծ ժողովրդականություն վայելող մի շարք երաժշտական խոշոր միջոցառումներ և համերգներ («Եվրատեսիլ 2008», «Մանկական եվրատեսիլ 2008», «Ազգային երաժշտական մրցանակաբաշխություն 2007», «Համերգ նվիրված Հայկական Բանակի 16-ամյակին», «Տաշիր 2008 ազգային երրորդ մրցանակաբաշխություն» և այլն): Հարկ է նշել, որ «Եվրատեսիլ 2008»-ը տարվա ընթացքում ցուցադրված ամենամեծ վարկանիշ ունեցող հաղորդումն էր, իսկ 20 լավագույն երաժշտական հաղորդումներից 17-ը ցուցադրվել է Հանրայինով: Հաղորդացանցում իրենց ուրույն տեղը շարունակել են պահպանել նաև երաժշտական հաղորդումները՝ «Երաժշտական փոստարկղը», «Դասական ալիքը», «Թեժ տասնյակը», «Թոփ 10-ը» և այլ համերգային ծրագրեր ու հաղորդումներ: «Երաժշտական փոստարկղ»-ը հանրությանն է մատուցում բազմաժանր ու բազմազան երաժշտական ոճեր՝ դասական, ազգային, ժողովրդական, ազգագրական, հայկական և արտասահմանյան էստրադա, հեղինակային երգ, երաժշտական նորություններ: 2008 թվականին նույնպես Հանրային հեռուստաընկերությունը հայ հեռուստադիտողին ներկայացրեց «Եվրատեսիլ 2008» մրցույթ փառատոնը, որտեղ Հայաստանը ներկայացրեց Սիրուշոն՝ գրավելով չորրորդ հորիզոնականը, ինչը աննախադեպ էր Հայաստանի համար: Հանրային հեռուստաընկերությունը ներկայացրեց նաև «Մանկական եվրատեսիլ 2008» մրցույթ փառատոնը, որը ներկայացրեց Մոնիկա Մանուչարովան: 2008 թվականին երաժշտական ուղղվածություն ունեցող բավականին հաջողված ու բացառիկ նախագիծ էր «Բենեֆիսը», որը հնարավորություն է տալիս ավելի լավ ճանաչել մեր շոու-բիզնեսի ներկայացուցիչներին: Ուղիղ եթերում, մոտ 2 ժամ կենդանի ձայնով իրենց համերգային ծրագիրն են ներկայացնում երգիչ-երգչուհիները: Հեռարձակվել է նաև «Թոփ 10»-ը, որի ընթացքում ներկայացվում են շաբաթվա կտրվածքով հեռուստադիտողների SMS քվեարկությունների հիման վրա ընտրված տասը լավագույն տեսահոլովակները, իսկ տարվա վերջում տեղի է ունենում մրցանակաբաշխություն: Արդեն երկար ժամանակ է Հանրային հեռուստաընկերությամբ եթեր է հեռարձակվում «Դասական ալիք» հաղորդաշարը: Այստեղ հիմնականում ներկայացվում են դասական երաժշտության ստեղծագործություններ, առանձին երաժիշտ կատարողներ՝ դիրիժորներ, դաշնակահարներ, ջութակահարներ, երգիչ-երգչուհիներ:

«Դասական ալիք» ծրագրով հեռուստադիտողին է ներկայացվում օպերային, սիմֆոնիկ, գործիքային, վոկալ ստեղծագործություններ:

Ինչպես արդեն նշվեց, 2008 թվականի սեպտեմբերից «Նոր ալիք» հեռուստաալիքի բազայի վրա հիմնվել և իր գործունեությունն է սկսել «Արարատ» մշակութային հեռուստաալիքը, որի հիմնական խնդիրը մշակութային ժառանգության և արդի մշակութային կյանքի համակողմանի լուսաբանումն է՝ արտահայտելով հասարակության տարբեր խմբերի մշակութային հետաքրքրություններն ու ակնկալիքները:

Որպես գլխավոր մշակութային լրատու «Արարատ» հեռուստաալիքը հեռարձակում է «Մշակ» լրատվական ծրագիրը, որի նշանակետն է՝ միայն մշակույթ, առանց քաղաքականության: Ուշադրության կենտրոնում է մշակութային անցուդարձը, մշակութային իրադարձությունները համապատասխան լուսաբանմամբ և լիարժեք մեկնաբանություններով:

«Արարատ» հեռուստաալիքով հերաձակվող «Թեժ անկյուն» հաղորդաշարի ընթացքում քննարկվում են հասարակությանը հուզող ամենաարդիական ու խնդրահարույց հարցերը, լինում են քննարկումներ, հումոր և լուրջ թեմաներ: «Խաչփողան» ամենշաբաթյա հաղորդման ընթացքում հանդիպում ու հատվում են տարբեր մտքեր ու ճիշտ կարծիքներ: Այստեղ քննարկվում են հեռուստադիտողին հետաքրքրող իրադարձություններն ու խնդիրները: Բոլորին հայտնի թեմաներն ու պատմության չլուսաբանված կողմերը հանդիպում են այստեղ՝ Խաչփողանում: Հրավիրվում են Հայաստանի և սփյուռքի գիտության անվանի ներկայացուցիչներ:

«Հանդիպում» հաղորդաշարի հեղինակները առաջին անգամ «Արարատ» ալիքով հեռուստադիտողին ծանոթացնում են հանրապետության ճանաչված երաժշտական գործիչների, օպերային բեմադրությունների, հյուրախաղերի եկած արտիստների հետ: Հաղորդաշարի հեղինակը, ելնելով հաղորդման խորագրից, հարցազրույցի միջոցով ներկայացնում է տաղավարի հյուրին, պատմում նրա անցած ստեղծագործական ուղու մասին, ծանոթացնում նրա ապագա ծրագրերի հետ և իհարկե, հեռուստադիտողի դատին ներկայացնում երաժշտական դրվագներ օպերային, բալետային ներկայացումներից, համերգային կատարումներ հանդիպման հերոսի մասնակցությամբ: Հաղորդաշարի ուշադրության կենտրոնում է նաև հանրապետության երաժշտական կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները /հոբելյաններ, հյուրախաղեր, երաժշտական իրադարձային երեուլյթներ, պրեմիերաներ/:

Մշակութային ուղղվածություն ունեցող հաղորդումներից հեռարձակվել է նաև «Վերնատունը», որտեղ մարդիկ, ովքեր իրենց գործի գիտակներն են ու վառ ներկայացուցիչները (մշակույթի, արվեստի, սպորտի, գիտության և կրթության գործիչներ),

քննարկում և վերլուծում են ժամանակակից հասարակությանը հուզող հրատապ հարցերը Մարատ Օրդյանի հետ:

Ամենշաբաթյա «Թատրոն» հաղորդաշարը, որի վարողը և հեղինակը ՀԹԳՄ-ի նախագահ և ռեժիսոր Հակոբ Ղազանչյանն է, անդրադառնում է Հայաստանի թատերական կյանքի իրադարձություններին, այդ թվում՝ Հայաստանում կայացած հյուրախաղերին: Քննարկվում են ներկա փուլում թատրոնների առջև ծառացած հիմնախնդիրները, անդրադարձ է կատարվում նաև թատրոնների խաղացանկային քաղաքականությանը, առաջիկա կազմակերպվելիք փառատոններին, արտագնա հյուրախաղերին: Հյուրերը թատերական աշխարհի մարդիկ են՝ թատերագետներ, ռեժիսորներ, դերասաններ, բեմադրիչներ: Նրանք զրուցում են թատերական կյանքի արդի վիճակի շուրջ: Հրավիրվում են նաև անվանի ռեժիսորներ, դերասաններ արտերկրից, որոնք հյուրախաղերով գտնվում են Հայաստանում: Մեր օրերի թատերական անցուդարձին անդրադառնում է նաև «Ներկայացումը շարունակվում է» հաղորդաշարը, որում լուսաբանվում և մեկնաբանվում են գրեթե բոլոր թատրոններում բեմադրված ներկայացումները հստակ հարցադրումներով. որո՞նք են ստեղծագործողների ձգտումները, ի՞նչ են որոնում բեմադրիչները, որո՞նք են խաղացանկային և արդի հայ դրամատուրգիայի խնդիրները: Հաղորդաշարը անդրադառնում է նաեւ թատրոններում ծագած խնդիրներին. թատրոններին գեղարվեստական ղեկավար պետք է, թե՞ ոչ, ինչ՞ու անտրպրիզային ներկայացումները անցնում են լեփ-լեցուն դահլիճներում, իսկ պետականը՝ ոչ… և այլն:

«Այբ, բեն, գիմ» հաղորդաշարը կազմված է զրույցներից /տևող. 20ր/, որոնք ունեն թեմատիկ ուղղվածություն՝ վերաբերմունք մայրենի լեզվի հանդեպ: Յուրաքանչյուր թեմատիկ զրույցից հետո խոսվում է արտասանական, քերականական սխալների մասին, որոնք շարքի հեղինակ և վարող ՀՀԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյանը գրառում է մամուլից և հեռուստաեթերից: Երբեմն զրույցի է հրավիրվում այդ խնդրով մտահոգված որևէ գիտնական, լեզվաբան, մանկավարժ:

Երաժշտական ուղղվածություն ունեցող հաղորդում է «Ջազի ժամը»: Ջազը համաշխարհային երաժշտական մշակույթի մասն է: Շարքն արդեն 10 տարի եթերում է: Այն ներկայացնում է ջազարվեստի լավագույն նմուշները, ծանոթացնում հեռուստադիտողներին ջազի պատմության, նրա ոճերի, ուղղությունների և մեծագույն ջազային երաժիշտների արվեստի հետ: Ծրագիրը ներկայացնում է նաև հայկական ջազի լավագույն նմուշները: Ծրագրում պարբերաբար հայտնվում են «Ջազի պատմության էջերը», «Ջազային օրացույց», «Հարցազրույց», «Ջազի ժպիտներ» խորագրերը:

«Պատրաստված է ԽՍՀՄ-ում» հաղորդաշարով անդրադարձ է կատարվում հին սովետական երգերին: Հաղորդաշար, որտեղ հեռուստադիտողը կարող է դիտել սիրված

հին սովետական երգերը 1950-ական թվականներից մինչև 90-ականների սկիզբը: Իսկ «Մեր ռետրոն» անդրադարձ է հին սիրված հայկական երգերին, որը հնարավորություն է տալիս դիտել հին հայկական մոռացված երգերը 1950-ական թվականներից մինչև 80-ականների վերջը:

«Արարատ» հեռուստաալիքով հեռարձակվում է մանկական ուղղվածություն ունեցող «Հեքիաթն է կանչում» հաղորդաշարը, որի ընթացքում երեխաների համար ընթերցվում են հետաքրքիր հեքիաթներ, իսկ վերջում ցուցադրվում է մուլտֆիլմ հայերեն լեզվով, ի դեպ, այն միակ հաղորդաշարն է երեխաների համար, որն ուղեկցվում է սուրդոթարգմանությամբ: «Մենք ենք» պատանեկան հաղորդաշարը անդրադառնում է տարածաշրջանային համագործակցության հիմնախնդիրներին: Ամեն շաբաթ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի պատանի լրագրողները «Ինտերնյուսի» Մանկական Խաչմերուկ ծրագրով ներկայացնում են իրենց հաղորդաշարը՝ ժամանց, խնդիրներ, ճամփորդություն, նոր մարդիկ ու հին ընկերներ: Պատանիները ներկայացնում են իրենց ռեպորտաժները, ճամփորդությունները, հոգսերն ու զվարճությունները:

Մշակութային բազմաթիվ հաղորդումների հետ մեկտեղ «Արարատ» հեռուստաալիքը հեռուստադիտողին է ներկայացնում «Հայֆիլմ» կինոստուդիայի, «Երևան» ստուդիայի կողմից նկարահանված գեղարվեստական և վավերագրական ֆիլմերը, բարձրաճաշակ գեղարվեստական ֆիլմերը, մշակութային ուղղվածության փաստագրական հեռուստաֆիլմերը:

Հեռուստահաղորդումների հեռարձակում

2008 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերության «Հ1» առաջին ալիքի հաղորդումները օրական 18-19.5 ժամ հեռարձակվել են Հայաստանի Հանրապետության տարածքում և 24 ժամ Երևանում և հարակից բնակավայրերում: 2008 թվականի սեպտեմբերից «Նոր ալիք» հեռուստաալիքի փոխարեն սկսել է հեռարձակվել «Արարատ» մշակութային հեռուստաալիքը, որի հաղորդումները օրական 24 ժամ հեռարձակվել են Երևան, Չարենցավան, Գավառ, Սևան, Եղեգնաձոր, Ջերմուկ, Ծաղկաձոր քաղաքներում և Շիրակի մարզում: Մոտ ապագայում նախատեսվում է ընդլայնել հեռուստաալիքի հեռարձակման գոտին ողջ հանրապետությունում: Արբանյակային հեռարձակմամբ հաղորդումները նույնպես հեռարձակվել են օրական 24 ժամ ծավալով:

Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է աշխատանքներ տանել արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում կաբելային և այլ կապուղիներով Հանրային հեռուստաընկերության հաղորդումները վերահեռարձակելու ուղղությամբ՝ սփյուռքահայ մեր հայրենակիցների համար ավելի մատչելի դարձնելով Հանրային հեռուստաընկերության հաղորդումների դիտումը: Մասնավորապես, հաշվի

առնելով ԱՄՆ-ում հայկական մեծ սփյուռքի առկայությունը՝ «ԳլոբՔասթ Ֆրանս» բաց բաժնետիրական ընկերության հետ կնքվել է Հանրային հեռուստաընկերության համահայկական հեռուստաալիքի հաղորդումների տարածման համաձայնագիր, որի համաձայն ԳլոբՔասթը մեկ տարվա ընթացքում պետք է ապահովի հեռուստաալիքի տարածումը այնպիսի հեռախոսային կամ կաբելային հեռարձակում իրականացնող ընկերությունների միջոցով, որոնք սպասարկում են ԱՄՆ տարածքի առնվազն 30%-ը:

Բանակցություններ են վարվել Ֆրանսիայում կաբելային ցանցերով Հանրային հեռուստաընկերության հաղորդումները հեռարձակելու ուղղությամբ, և 2009 թվականի մարտից ֆրանսիական «Օրանժ» ընկերությունը Հանրային հեռուստաընկերության հաղորդումները Ֆրանսիայի տարածքում կհեռարձակի նաև կաբելային ցանցերով, ինչը հնարավորություն կտա առանց արբանյակային սարքավորումների ձեռքբերման դիտել Հանրային հեռուստաընկերության արբանյակային ծրագրի հաղորդումները:

ԱՊՀ երկրներում՝ հատկապես Ռուսաստանում, Ուկրաինայում, Ղազախստանում, Մոլդովայում աճել են Հանրային հեռուստաընկերության հաղորդումների կաբելային ցանցով հեռարձակման ծավալները: Մասնավորապես, Հանրային հեռուստաընկերության հաղորդումները կաբելային ցանցով հեռարձակվում են Մոսկվայում, Պերմում, Ուֆայում, Ն. Նովգորոդում, Վոլգոգրադում, Վոլժսկիում, Տյումենում, Իժևսկում, Եկատերինբուրգում, Կրասնոյարսկում, Օմսկում, Տոլյատիում, Սուրգուտում, ՌԴ Սմոլենսկի և Բելգորոդի մարզերում, Խարկովում, Օդեսայում, Քիշինևում, Ակտաուում և մի շարք այլ քաղաքներում: Հանրային հեռուստառադիոընկերության կողմից աշխատանքներ են տարվում Հանրային հեռուստաընկերության հաղորդումները Ավստրալիայում և Լատինական Ամերիկայում հեռարձակելու ուղղությամբ:

Առևտրային գործունեություն

2008 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերությունն իրականացրել է նաև առևտրային գործունեություն, մասնավորապես՝ հաղորդումների հովանավորչությունից և հեռարձակման ու առևտրային գովազդի տեղադրման գործունեությունից ընկերությունը ստացել է 821193.6 հազ. դրամ եկամուտ, նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուներին տրամադրված վճարովի եթերաժամանակից՝ 42684.1 հազ. դրամ և այլ առևտրային գործունեությունից՝ 23682.2 հազ. դրամ եկամուտ: Ընդհանուր առմամբ, 2008 թվականին ընկերությունը ստացել է 887559.9 հազ. դրամ (առանց պետական բյուջե վճարված անուղղակի հարկերի) եկամուտ: Հանրային հեռուստաընկերությունը 2008 թվականին պետական բյուջե է վճարել 533472.4 հազ. դրամ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ:

Հանրային հեռուստաընկերության առևտրային եկամուտները հիմնականում ուղղվել են հեռուստահաղորդումների պատրաստմանն ու հեռարձակմանը, ինչպես նաև խոշոր միջազգային միջոցառումների հեռարձակման իրավունքների ձեռքբերմանը:

Ներդրումային գործունեություն

2008թ. Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հեռուստաընկերության տեխնիկական վերազինման գործընթացը, հատկապես կարևոր նշանակություն ունեցավ կենտրոնական սարքասրահի և եթերի ավտոմատացման ծրագիրը: Ծրագրի իրականացման նպատակով Հանրային հեռուստաընկերությունը դեռևս 2007 թվականին «հեռարձակման կենտրոնի» ձեռքբերման, տեղակայման և փորձարկման վերաբերյալ պայմանագիր էր կնքել չեխական «Ավեկո» ընկերության հետ: Հեռարձակման կենտրոնի ձեռքբերմանն է ուղղվել նաև 2008թ. ՀՀ պետական բյուջեից ստացված 78092.7 հազ. դրամ դրամաշնորհը, իսկ պայմանագրով նախատեսված ծախսերի մնացած մասը իրականացվել է ընկերության առևտրային եկամուտների հաշվին, ինչպես նաև ծախսերի կատարման նպատակով մինչև 120000.0 (հարյուր քսան հազար) հազ. դրամ գումարի չափով վարկային պայմանագիր է կնքվել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության և «Ինեկոբանկ» փակ բաժնետիրական ընկերության միջև:

Հեռարձակման կենտրոնը բաղկացած է երկու հիմնական բաղադրիչներից՝ կենտրոնական սարքասրահի ավտոմատացման համակարգ և թերի ավտոմատացման համակարգ: Քանի որ կենտրոնական սարքասրահը հանդիսանում է հեռուստաընկերության գլխավոր կոմունիկացիոն հանգույցը, որի միջոցով է իրականացվում ինչպես տեսաձայնագրման, այնպես էլ եթեր հեռարձակման բոլոր ազդանշանների հաղորդումը, ուստի վերջինիս ավտոմատացումը հնարավորություն է ընձեռում ներկայումս շահագործվող անալոգային համակարգը փոխարինել թվանշային համակարգով, տեսագրման և նկարահանման բոլոր սարքասրահները ընդգրկել մեկ միասնական ցանցում և խուսափել կոմուտացիայի ընթացքում տեսաազդանշանի որակի կորստից: Իսկ եթերային բլոկի ավտոմատացումը հնարավորություն է տալիս թվայնացնել հեռուստատեսության ամբողջ տրակտը, ինչի արդյունքում հեռուստաընկերության բոլոր վեց սարքասրահների կողմից միմյանց փոխանցվող տեսա և ձայնային ազդանշանները հաղորդվում են թվային ձևաչափով՝ ապահովելով հեռուստաազդանշանի բարձր որակ:

Այս համակարգի ներդնումը առաջընթաց քայլ է դեպի թվային հեռուստատեսություն:

Հեռարձակման կենտրոնի սարքավորումները 2008 թվականին ամբողջությամբ ձեռք են բերվել և սկսվել են մոնտաժային աշխատանքները, որոնց հիմնական մասը արդեն իսկ կատարվել է: Մոնտաժային աշխատանքները կավարտվեն 2009 թվականի առաջին եռամսյակում և կսկսվի համակարգի փորձնական շահագործումը, իսկ տարվա կեսից այն կշահագործվի ամբողջությամբ:

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ

2008 թվականին Հայաստանի հանրային ռադիոընկերությունը շարունակել է իրականացնել ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեություն:

Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «2008 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին» ծրագրի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով ընկերությանը հատկացվել է 681772.2 հազ. դրամ, որից հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման իրավունքների ձեռքբերման համար հատկացվել է 484963.5 հազ. դրամ, հեռարձակման համար՝ 196808.7 հազ. դրամ, իսկ «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով տեխնիկական վերազինման համար՝ 10000.0 հազ. դրամ:

Ռադիոհաղորդումների պատրաստում

2008 թվականին Հանրային ռադիոընկերությունը պատրաստել է օրական 24 ժամ հաղորդումներ «Առաջին ծրագրի», 21.9 ժամ «Ռադիո Երևանի» և 23.9 ժամ «Ռադիո Ջազի» համար: Արտասահմանում հեռարձակման համար պատրաստվել է օրական 4.5 ժամ հաղորդումներ:

2008թ. ընթացքում Հանրային ռադիոընկերությունը պատրաստել է 27206.2 ժամ ռադիոհաղորդումներ: Հաղորդումներն ըստ թեմատիկ ուղղությունների պատրաստվել են հետևյալ ծավալներով.

N	Հաղորդումների թեմատիկ ուղղվածությունը	Հաղորդումների պատրաստման ծավալը (ժամ)
1	Լրատվական հաղորդումներ	1373.2
2	Հասարակական- քաղաքական-տնտեսական հաղորդումներ	104.2
3	Պատմամշակութային հաղորդումներ	525.2
4	Երիտասարդական և ուսումնական հաղորդումներ	490.3
5	Մանկապատանեկան, կրթական հաղորդումներ	345.5
6	Հոգևոր հաղորդումներ	403.9
7	Երաժշտական, ժամանցային հաղորդումներ	5539.2
8	Ռադիո «Երևան»	8020.4
9	«Զազ ռադիո»	8748.0
10	Արտասահմանի համար տրվող հաղորդումներ	1656.3
	Ընդամենը	27206.2

Նախապատվություն տալով սեփական արտադրության հաղորդումներին՝ Հանրային ռադիոն ընդլայնել է իր ունկնդիրների շրջանակը՝ ձգտելով բավարարել սոցիալական լայն շերտերի, տարիքային խմբերի, ազգային փոքրամասնությունների նախասիրությունները: Ռադիոծրագրերի պատրաստման հիմքում ուղենիշ են ընդունվել հասարակության աշխարհայացքի ձևավորումն ու աշխարհընկալման ընդլայնումը, երիտասարդների և պատանիների դաստիարակությունը, նրանց գեղագիտական ճաշակի ձևավորումը:

Հանրային ռադիոընկերության առջև դրված խնդիրն եղել է հասարակությանը ժամանակին, օպերատիվ, անկողմանակալ և բազմակողմանի տեղեկատվություն հաղորդելը, հասարակական հնչեղություն պարունակող թեմաներին արագ արձագանքելը, որոնք եղել են ռադիոընկերության գործունեության կարևորագույն ուղղությունները, ուստի հաղորդումների ստեղծման հիմքում ամրագրված է բազմակարծության ապահովման սկզբունքը: Հանրային ռադիոընկերությունը օպերատիվ տեղեկատվություն է հաղորդել ներքին և արտասահմանյան իրադարձությունների մասին, ունկնդրին ծանոթացրել է ազգային և համաշխարհային մշակութային անցուդարձին, ժառանգությանը, տեղեկացրել է գիտության և տեխնիկայի բնագավառում, հասարակության կյանքում տեղի ունեցող իրադարձություններին: Ռադիոհաղորդումների մեջ լրատվական և տեղեկատվական հաղորդումները կազմել են ռադիոեթերի զգալի ծավալը, որոնք անդրադարձել են քաղաքական, տեղական-լրատվական, հասարակական-քաղաքական, մարզական և այլ բնույթի իրադարձություններին: «Ռադիոլուր» ծրագրի միջոցով լրատվությունը ներկայացվել է յուրաքանչյուր ժամագլխին 5-15 րոպե տևողությամբ, իսկ հիմնական թողարկումը (60 րոպե տևողությամբ) ներառել է օրվա ամբողջ լրահոսը և օրվա կարևորագույն թեմաների վերաբերյալ վերլուծական նյութեր ու հարցազրույցներ: Ընդգրկուն է նաև լրատվության աշխարհագրական սահմանները՝ Լեռնային Ղարաբաղ,

Ջավախք, սփյուռք, հանրապետության մարզեր, միջազգային անցուդարձ և այլն: Քննարկվել են տնտեսական բնույթի հասարակական հնչեղություն ունեցող հարցեր, պարզաբանումներ և մեկնաբանություններ ընդունված օրենքների կամ շրջանառության մեջ դրված նախագծերի վերաբերյալ: Հասարակությունը իրազեկվել է պետության կողմից վարվող քաղաքականության, տարբեր ոլորտներում իրականացվող և իրականացվելիք քայլերի մասին: Լուսաբանվել են ՀՀ պետական և կառավարական բոլոր պաշտոնական հանդիպումները, պաշտոնական հաղորդագրությունները, մամուլի ասուլիսները, քաղաքական տարաբնույթ իրադարձությունները, օրվա լրատվական ծրագրերում անդրադարձ է կատարվել նաև հայաստանյան մամուլում տեղ գտած հրապարակումներին: Ոստիկանության և պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա շաբաթական մեկ անգամ հեռարձակվել են նաև «02» և «Ասպար» լրատվական հաղորդումները: Եթեր է հեռարձակվել նաև «Ռադիոլուր»-ի ռուսերեն լեզվով տարբերակը՝ «Արմենիա», որը նպատակ է հետապնդում համապատասխան լրատվությամբ ապահովել ազգային փոքրամասնություններին:

Քաղաքական-տնտեսական վերլուծական հաղորդումներն անդրադարձել են օրվա հրատապ խնդիրներին, ներքաղաքական իրադարձություններին: Կարևորագույն իրադարձությունները ներկայացվել են վերլուծական հաղորդումներում՝ «Իրազեկում» և «Բաց նախագիծ», որոնց ընթացքում հրատապ և կարևորագույն խնդիրների վերաբերյալ քննարկումներ են կազմակերպվել քաղաքական տարբեր ուժերի ներկայացուցիչների հետ ու ներկայացվել են վերջիններիս կարծիքները և դիրքորոշումները: Պետական և քաղաքական նշանակության ոչ մի իրադարձություն դուրս չի մնացել Հանրային ռադիոընկերության քաղաքական ծրագրերի տեսադաշտից: Հարկ է նշել, որ հատկապես 2008 թվականին առավել համակողմանի են արտացոլվել ՀՀ կառավարության, Ազգային Ժողովի գործունեությունը, ինչպես նաև հասարակական ոլորտին վերաբերող առավել ուշագրավ իրադարձություններ: Հանրային ռադիոեթերում հեռարձակվել են նաև Ազգային Ժողովի նիստերը: 2008 թվականի ընթացքում նախագահական ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Հանրային ռադիոն վճարովի և անվճար եթերաժամանակ է տրամադրել նախագահական ընտրություններում գրանցված թեկնածուներին (706.4 րոպե անվճար և 119.5 րոպե վճարովի):

Հանրային ռադիոյի քաղաքական եթերը առանձնացել է իր հավասարակշռվածությամբ, այստեղ կազմակերպվող քննարկումներին ներկա են եղել ինչպես իշխանության, այնպես էլ ընդդիմության ներկայացուցիչներ՝ քննարկելու երկրի քաղաքական դաշտին վերաբերող բազմաթիվ խնդիրներ՝ միաժամանակ ապահովելով տեսակետների և կարծիքների բազմազանություն: Ներկայացվել են նաև հասարակական

քաղաքական գործիչների, տնտեսագետների տեսակետներ, ուղիղ հեռախոսակապի միջոցով կազմակերպվել են բանավեճեր, լուսաբանվել են տնտեսական ոլորտին առնչվող հարցեր՝ ապահովելով բազմակարծություն:

Մշակութային հաղորդումները անդրադարձել են մշակույթի և մշակութային գործիչների կյանքին ու գործունեությանը: «Վերնատուն» հաղորդման շրջանակներում անվանի և տաղանդավոր արվեստագետների հետ ուղիղ եթերում կազմակերպվել են հանրապետության մշակութային անցուդարձին վերաբերող անկեղծ ու հետաքրքիր զրույցներ՝ հասարակությանը հուզող բարոյական և հոգևոր խնդիրների, ինչպես նաև մշակութային համակարգում առկա այլ կարևոր հիմնախնդիրների մասին: Հանրապետության մարզերում և քաղաքներում տեղի ունեցող մշակութային անցուդարձերի հետ միասին լուսաբանվել են նաև համաշխարհային մշակույթի նորությունները: «Կուլիսներ» հաղորդման ընթացքում ներկայացվել է թատրոնների անցուդարձը և դրանց վերաբերող խնդիրները, «Երաժշտությունը և մենք» հաղորդաշարը անդրադարձել է դասական երաժշտությանը, տարբեր հանրաճանաչ երաժիշտների դասական ստեղծագործություններին: «Հայաստանը մեր տունն է» հաղորդումը նվիրված էր ազգային փոքրամասնությունների մշակույթի, ավանդույթների ներկայացմանն ու պահպանմանը: Ռադիոունկնդիրների շրջանում մեծ հետաքրքրություն է առաջացրել նաև «Թղթապանակ N» հաղորդաշարը, որի հեղինակը փորձել է պետական արխիվի նյութերի հիման վրա ներկայացնել մեր պատմության չբացահայտված, մութ էջերը և կատարել եզրակացություններ: Մշակութային ռադիոծրագրերը նպատակ են ունեցել պրոպագանդելու ազգային և համաշխարհային մշակութային արժեքները, դասական արվեստի, դասական գրականության, ազգային երգի և երաժշտարվեստի նմուշները: Ռադիոունկնդիրը հնարավորություն է ունեցել ունկնդրելու անցյալ ժամանակներից մեզ հասած մշակութային արժեքներ ներկայացնող և ճանաչում ունեցող արվեստի գործեր: Մասնավորապես, 2008 թվականի ընթացքում Վ. Սարոյանի «Ոստրեն և Մարգարիտը» պատմվածքի և «Զորավարի հուշերը» Հ. Բաղրամյանի գրքի հիման վրա ձայնագրվել է 2 ռադիոթատրոն, որոնք նվիրված են Վիլյամ Սարոյանի 100-ամյակին և Սարդարապատի հերոսամարտի 80 ամյակին:

Հոգևոր հաղորդումները պատրաստվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արարատյան թեմի դիվանի հետ համագործակցությամբ: «Ավետիս», «Շողակն Արարատյան» և «Մանանա» հաղորդաշարերի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ հոգևորականների հետ, որոնք էլ պարբերաբար ներկայացրել են քրիստոնեական տոները, ծիսակարգը, ինչպես նաև պատասխանել են բնակչությանը հուզող շատ հարցերի:

Հանրային ռադիոընկերության եթերում իրենց ուրույն տեղն ունեն նաև երաժշտական հաղորդումները: Ներկայացվել են դասական, ժամանակակից,

ժողովրդական, ազգագրական, ջազ, փոփ երաժշտություն: «Արմատներ» հաղորդաշարը ազգային երաժշտության պահպանման և տարածման նպատակով ներկայացրել է ժողովրդական, գուսանական, ազգագրական, ինչպես նաև հայ մեծանուն կոմպոզիտորների ստեղծագործությունները՝ նպատակ ունենալով ազգաբնակչության մեջ վերականգնել մեր ժողովրդի երաժշտական կենցաղում տարածում գտած մեր տաղերգուների և գուսանների երգերն ու տաղերը: Ժողովրդին են հասցվել ազգային երգարվեստի գանձերը, իսկ երգի կամ երաժշտության կատարումը սերտորեն զուգակցվել է երաժշտության պատմության հարցերի պարզաբանման և ուսումնասիրության հետ: Հեռարձակվել են «Կամերտոն», «Էտյուդներ», «Հազար ու մի օպերա» հաղորդաշարերը, որոնք ներկայացրել են ինչպես մեր կոմպոզիտորների դասական ստեղծագործությունները, այնպես էլ համաշխարհային դասականները: Հարկ է նշել, որ 2008 թվականին Հանրային ռադիոընկերության էստրադային սիմֆոնիկ նվագախումբը կատարել է թվով 18 ստեղծագործությունների նորովի ձայնագրություններ: Բացի այդ, «Ռետրո» հաղորդումը անդրադարձ է կատարել ռետրո երաժշտությանը՝ փորձելով հանրությանը մատուցել այդ ոճի լավագույն ստեղծագործությունները: Հաղորդացանցի ամբողջական նկարագիրը առավել հայեցի դարձնելու համար այլ թեմաներով հաղորդումների ձևավորումներում ևս նախապատվությունը տրվել է հայկական մեղեդիներին: «Հակակշիռ» հաղորդման ընթացքում կազմակերպվել են ժամանակակից երաժշտական մշակույթի խորքային հիմնահարցերի պրոֆեսիոնալ և անկեղծ քննարկումներ մտավորականների, կոմպոզիտորների, երիտասարդ երգիչների և բնագավառի հիմնախնդիրներով մտահոգ մասնագետների մասնակցությամբ: Ուղիղ հեռախոսակապի միջոցով ընդունվել են ունկնդիրների երաժշտական պատվերները, ինչպես նաև կազմակերպվել են հիթ-շքերթներ, երաժշտական խաղ-վիկտորինաներ, որոնց միջոցով ռադիոեթերը դարձել է ավելի աշխույժ:

Երիտասարդական հաղորդումները տարվա ընթացքում անդրադարձել են երիտասարդությանը հուզող հիմնախնդիրներին, տեղի են ունեցել դրանց վերաբերյալ քննարկումներ: Զգալի տեղ է հատկացվել կրթական և ուսումնական, հանրամատչելի և զվարճալի, հայրենասիրական և գիտակրթական, էսթետիկական և դաստիարակչական թեմաներին: Հանրային ռադիոյի «Երիտասարդական ծրագիրը» եթերում է եղել ամեն օր: Հերոսները երիտասարդներ են՝ իրենց տարաբնույթ խնդիրներով և հետաքրքրություններով, անդրադարձ է կատարվել կրթական, բնապահպանական, սոցիալական, մշակութային ու սպորտային ոլորտներին, ցանկացած երևույթ, խնդիր, միջոցառում, ակցիա կամ հանդիպում ներկայացվել է երիտասարդի տեսանկյունից և փորձ է կատարվել գտնելու այն կարևոր ճշմարիտ ասելիքը, որը կօգնի երիտասարդությանը: Ծրագրի շրջանակներում անդրադարձ է կատարվել մարզերի

երիտասարդների հիմնախնդիրներին, նրանց կյանքին և առօրյային: Այդ առումով ծրագիրը համագործակցել է Հայաստանի տարբեր շրջանների երիտասարդական կազմակերպությունների, ակումբների հետ՝ ռադիոունկնդիրներին ապահովելով վերջիններիս մասին տեղեկատվությամբ: Ծրագիրը մշտապես լուսաբանել է նաև միջազգային կրթական ծրագրերը:

Հեռարձակվել են «Սև ու սպիտակ», «Եռացող թեյնիկ» հաղորդումները, որոնց ընթացքում կազմակերպվել են թոք շոուներ երիտասարդությանը վերաբերող տարբեր խնդիրների շուրջ: Լուսաբանվել են այն իրադարձությունները, որոնք առնչվել են երիտասարդների խնդիրներին, այն է՝ մարզական հաղորդումներ և սպորտ, կարծիքների փոխանակում, զրույց երիտասարդ ունկնդրի հետ, որտեղ տեղ են գտել թեմաներ կրթության, բուհական կյանքի, ընտանիքի, բանակի, երիտասարդության զբաղվածության և այլ հարցերի շուրջ: «Դա հետաքրքիր է» հաղորդաշարը իր երիտասարդ ունկնդիրներին ներկայացրել է ուշագրավ տեղեկատվություն ինտերնետային տարբեր աղբյուրներից: Դաստիարակչական և ուսուցողական առումով կարևորվել է հատկապես «Ապրելու բանաձև» հաղորդումը, որը անդրադարձել է Արցախի հերոսամարտում զոհված մարտիկներին, նրանց ընտանիքներին և որը նպատակ է հետապնդել երիտասարդության մեջ սերմանել հայրենասիրական ոգին:

Մանկապատանեկան հաղորդումները՝ «Զարթուցիչ», «Հարրի Փոթերի ակումբ», «Կար չկար» և «Պստիկաշեն», Հանրային ռադիոյի եթերում հեռարձակվել են ամեն օր՝ 60 րոպե ընդհանուր տևողությամբ: Վերոնշյալ հաղորդումներում զգալի տեղ է հատկացվել ուսումնական, կրթական և ճանաչողական թեմաներով հաղորդումներին, որոնք հասցեագրված են եղել դպրոցականներին հետաքրքրող հարցերին, ինչպես նաև տարիքային և ինտելեկտուալ ամենատարբեր սանդղակների համապատասխան լսարանին: Անդրադարձ է կատարվել նաև դժվար դաստիարակվող, ֆիզիկական արատով երեխաների կրթական, սոցիալական, հոգեբանական խնդիրներին վերաբերվող թեմաներին, պատանիների համար նախատեսված մշակութային և մարզական կառույցների գործունեությանը: Բանավեճերի ընթացքում քննարկվել են երեխաներին հուզող խնդիրներ և մասնագետների՝ հոգեբանների, մանկավարժների մասնակցությամբ փորձել են գտնել պատասխաններ:

Մանկապատանեկան հաղորդումներն ավելի գրավիչ դարձնելու համար եթերում կազմակերպվել են մանկական երգի հիթ-շքերթներ, «Ռադիոխաղ» հաղորդաշարի ընթացքում կազմակերպվել են տարատեսակ մանկապատանեկան խաղեր, որոնք առավել աշխույժ են դարձրել եթերը: Իսկ փոքրիկ կատարողները հնարավորություն են ստացել ներկայանալ ունկնդրին և ստանալ գնահատական: Յուրաքանչյուր կիրակի հեռարձակվում է մեկ մանկական ռադիոթատրոն:

Հեռարձակվող «Մենք և մեր բառերը» և «Խոսենք հայերեն» ամենօրյա հաղորդումները ներկայացրել են հայերեն լեզվի բազմակազմությունը, բառերի արմատների, դարձվածքների, շարահյուսության վերաբերյալ օգտակար տեղեկատվություն:

«Երևան» ծրագիրը ամենօրյա հաղորդումների շարք է, որն անդրադարձել է մայրաքաղաքի խնդիրներին, ներկայացրել մայրաքաղաքի համայնքներում կատարված աշխատանքները, արձագանքել է բնակիչների դիտողություններին և առաջարկություններին, ներկայացրել մայրաքաղաքում կառավարման հաջողություններն ու բացթողումները: Հաղորդման ընթացքում, որն ընդգրկում է մայրաքաղաք Երևանին վերաբերող գրեթե բոլոր ոլորտները, կատարվել են լրագրողական հետաքննություններ քաղաքային տնտեսության, տրանսպորտի, սանիտարական ծառայությունների, արտաքին լուսավորության, բնակարանային ֆոնդի պահպանության, քաղաքաշինության, ճարտարապետության, վթարային շենքերի ամրացման, փողոցների նորոգման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների արդյունավետության, բնապահպանական խնդիրների վերաբերյալ:

Արտասահմանի համար տասնչորս լեզուներով (հայերեն, ռուսերեն, վրացերեն, պարսկերեն, եզդիերեն, աղրբեջաներեն, թուրքերեն, քրդերեն, ասորերեն, արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն) պատրաստված հաղորդումներում ներկայացվել է Հայաստանի պատմությունը, ներկան, Հայաստանի հարկային և մաքսային դաշտը, Հայաստանը որպես ներդրումների համար շահավետ և գրավիչ երկիր: Արտասահմանի համար տրվող հաղորդումները, ուղղված լինելով դեպի արտաքին քարոզչություն, արծարծել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են Ղարաբաղի խնդրի կարգավորումը, Հայ դատի և ցեղասպանության ճանաչման հարցերը: Հազարավոր ունկնդիրներ մեր հաղորդումների միջոցով ծանոթացել են վերոհիշյալ խնդիրներին, միաժամանակ Սփյուռքում ապրող շատ հայեր, չտիրապետելով մայրենի լեզվին, հայրենիքից տեղեկատվություն են ստանում այն լեզվով, որին նրանք տիրապետում են, ինչը ևս նպաստում է Հայրենիքի և Սփյուռքի միջև կապերի ամրապնդմանը: Այս առումով հատկապես կարևորվում է «Կամուրջ» Հայաստան-Սփյուռք ամենօրյա հաղորդումը, որի շրջանակներում պարբերաբար ուղիղ կապ է հաստատվել գաղթօջախներում գործող հայկական լրատվամիջոցների հետ և տեղեկացվել համայնքներում տեղի ունեցող իրադարձությունների մասին:

Հանրային ռադիոընկերության ինտերնետային 24 ժամյա հեռարձակումը (www.armradio.am հասցեով) ունեցել է բավական մեծ լսարան: Միջազգային ինտերնետային էջը (www.int.armradio.am հասցեով), որտեղ տեղադրվել են անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, գերմաներեն, ռուսերեն, պարսկերեն, քրդերեն հաղորդումների

տեքստային և ձայնային տարբերակները, հնարավորություն է տալիս հաղորդումները լսել և կարդալ օրվա ցանկացած ժամին, ինչպես նաև արխիվի միջոցով ծանոթանալ նախորդ օրերի հաղորդումներին:

«Ռադիո Ջազ»-ը շուրջօրյա հեռարձակում է ապահովել ջազի սիրահարների համար՝ ծրագրերում ընդգրկելով ավանդական և ժամանակակից ջազի, ջազ-ստանդարտների, անցյալի մեծ վարպետների, ժամանակակից հայ և օտարազգի կատարողների լավագույն ձայնագրությունները:

«Ռադիո Երևան»-ն իր մեջ ներառում է երաժշտական, ժամանցային, հետաքրքիր ծրագրեր երիտասարդների համար: Ծրագրերը բազմազան են՝ հայկական, արտասահմանյան, ռուսական, պոպուլյար և այլ կատարումներ: Ռադիոկայանը հեռարձակվում է Հայաստանի ողջ տարածքում :

Ռադիոհաղորդումների հեռարձակում

2008 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերության հաղորդումները հեռարձակվել են միջին, կարճ, գերկարճ և FM հաճախականություններով: Հեռարձակման աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ–ի տեխնիկական միջոցներով, «Ռադիո» ՓԲԸ-ի, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «ԱՐ ռադիո միջմայրցամաքային» ՍՊԸ-ի կողմից՝ ըստ սահմանված որակական և տեխնիկական չափանիշների:

Հանրային ռադիոընկերության հաղորդումները եթեր են հեռարձակվել նաև ինտերնետային կապի միջոցով, որտեղ տեղադրվել է ամենաժամյա լուրերի էլեկտրոնային տարբերակը հայերենով և անգլերենով: Հեռարձակման աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով՝ պահպանելով ծրագրերի արտադրության և հեռարձակման չափանիշներն ու ստանդարտները:

Առևտրային գործունեություն

2008 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերությունն իրականացրել է նաև առևտրային գործունեություն, որից ընկերությունը ստացել է 34817.8 հազ. դրամ եկամուտ, որը նույնպես ուղղվել է ռադիոհաղորդումների պատրաստմանն ու հեռարձակմանը:

Ներդրումային գործունեություն

2008 թվականին Հանրային ռադիոընկերությունը պետական բյուջեից ստացված 10000.0 հազ. դրամ կապիտալ դրամաշնորհի հաշվին տեխնիկական վերազինման ծրագրի շրջանակներում ձեռք է բերել ջերմակարգավորող սարքավորումներ, որոնք ապահովել են եթերային ստուդիաներում և սարքասրահներում տեղադրված նոր սարքավորումների անխափան և կայուն աշխատանքը: Գնվել են նաև համակարգիչներ, որոնք

հնարավորություն են տալիս լրագրողներին ինքնուրույն արագ մոնտաժել և պատրաստել ռեպորտաժները, որն էլ աշխատանքը դարձնում է ավելի օպերատիվ:

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ

Հանրային հեռուստառադիոընկերությունը Շիրակի մարզում հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեություն է իրականացնում «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի միջոցով: Օրական 8 ժամ հեռուստահաղորդումների և 24 ժամ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «2008 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով պետական աջակցություն «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին» ծրագրի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով ընկերությանը հատկացվել է 22961.9 հազ. դրամ, որից հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման իրավունքների ձեռքբերման համար հատկացվել է 21003.4 հազ. դրամ, իսկ հեռարձակման համար՝ 1958.5 հազ. դրամ: «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի հաղորդումների հեռարձակումն իրականացվել է Շիրակի մարզի տարածքում մետրային տիրույթի 6-րդ կապուղով վերը նշված ժամաքանակներով, իսկ ռադիոհաղորդումների հեռարձակումը՝ FM տիրույթում 102.5 ՄՀց հաճախականությամբ:

Պետական բյուջեից հատկացված դրամաշնորհի միջոցներով 2008 թվականի հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքներն իրականացվել են հետևյալ թեմատիկ ուղղություններով և ծավալներով.

N	Հաղորդման թեմատիկ ուղղվածությունը	Հեռուստահաղորդումների պատրաստման ծավալը հաշվետու ժամանակաշրջանում /ժամ/	Ռադիոհաղորդումների պատրաստման ծավալը հաշվետու ժամանակաշրջանում /ժամ/
1	Լրատվական-վերլուծական	170	170
2	Սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական	30	22
3	Մշակութային, կրթական, հոգևոր	20	22
4	Մարզական, մանկապատանեկան	10	200
5	Երաժշտական, ժամանցային, երգիծական	2316	432
6	Այլ	200	7938
	Ընդամենը	2928.0	8784

Հեռուստադիտողին են ներկայացվել հիմնականում «Օրագիծ», «Հետագիծ», «Փակագիծ», «Ստորակետ», «Ես և դու», «Դեպի տաճար», «Շիրակ աշխարհի սպորտ» հեռուստահաղորդումները, իսկ ռադիոունկնդիրներին՝ «Օրագիծ», «Հետագիծ», «Անդրադարձ», «Դեպի տաճար», «Չէիք սպասում», «Երաժշտական խճանկար», «Մուզ Մոզայկա», «Քեզ համար», «Մենք ու մենք», «Միայն մեկը» ռադիոհաղորդումները:

Շիրակի հանրային հեռուստառադիոն իր պատրաստած հաղորդումներում հեռուստադիտողներին և ռադիոունկնդիրներին ներկայացրել է մարզի առօրյան, անդրադարձել է մարզի հանրությանը հուզող հարցերին և արտացոլել է մարզի մշակութային կյանքը:

2008 թվականին «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում ընկերությունն առևտրային գործունեությունից ստացել է 8666.7 հազ. դրամ եկամուտ:

<u>Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն</u>

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը հասարակական կարծիքի ուսումնասիրման աշխատանքներն իրականացնում է «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով: Կենտրոնի հիմնական նպատակն է ուսումնասիրել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոյի եթերում հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հանրության կարծիքը:

«2008 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն «Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով պետական աջակցություն «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին» ծրագրի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով ընկերությանը հատկացվել է 10000.0 հազ. դրամ դրամաշնորհ:

«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ 2008 թվականին անց է կացրել հինգ սոցիոլոգիական հետազոտություն, ընդգրկվել են 2000 ռեսպոնդենտներ Երևան քաղաքի բոլոր համայնքներից և 2260 ռեսպոնդենտներ ՀՀ բոլոր մարզերից: Անցկացվել է փորձագիտական 12 հետազոտություններ 1200 փորձագետների մասնակցությամբ, որոնք վերաբերվել են հետևյալ հիմնական թեմաներին՝ տնտեսություն, սպորտ, հեռուստատեսություն, ռադիոկայաններ և էլեկտրոնային մամուլ, տպագիր մամուլ, առողջապահություն և ՋԼՄ փոխհարաբերություններ, ինչպես նաև ՋԼՄ-ների վերաբերյալ իրենց տեսակետներն ու կարծիքներն են ներկայացրել մշակույթի, կրթության, գիտության բնագավառի, հասարակական կազմակերպությունների և հասարակական–քաղաքական կուսակցությունների, երիտասարդության ու ուսանողության ներկայացուցիչները:

Վերոնշյալ հետազոտությունների և հարցումների արդյունքները նպաստել են Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության ծրագրերի կառուցվածքում անհրաժեշտ փոփոխությունների կատարմանը, ինչպես նաև ծրագրերի կազմման գործընթացին հանրության մասնակցության ապահովմանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ